

միտաս Վարդապետ, գտաւ ճամբան երկնային լոյսը բերելու իր ժողովուրդին: Ան գիտցաւ երկնքի լոյսը բերել իր հայրենի ժողովուրդին:

Ըստուած է թէ անհատներ, նման ազգերու, կ'ապրին միայն հոգեկանով, որ է լեզու, գիր եւ արուեստ: Անոնք որոնք կը յաղթեն իրենց մէջ գտնուող աշխարհին, անոնք իսկական մեծութիւններ են, եւ Մեծ Վարդապետը՝ Կոմիտաս եղաւ մին այդ մեծութիւններէն, որ յաղթահարեց կեանքի, մանաւանդ Եւրոպական ոստաններու փորձութիւններուն ու դժուարութիւններուն, մղած միակ ձգտումէ մը, Հայ երաժշտական արուեստը ներկայացնելու Եւրոպական հանրութեան: Մինչեւ Կոմիտաս, ո՞վ կամ ո՞ր հայ երաժշտագէտը գիտցաւ իրագործել այն՝ ինչ որ Անմահ Վարդապետը ըրաւ, որ մեր ժողովուրդի լինելութեան արմատներէն ծաղկեցուց մեր երաժշտութիւնը: Յետագարձ հայեացք մը երկվայրկեանի համար Կոմիտասի բացառիկ անձին վրայ, արդէն ենթական կը լեցնէ անբացատրելի հիացումով, հակառակ իր փխրուն ֆիզիքականին, սակայն միաժամանակ ունեցած հոգեկան անասելի մեծութեան: Ինչպէ՞ս եւ ուրկէ՞ էր անոր այդ քաղցր, սակայն միաժամանակ հզօր անհատականութիւնը, որ իր ժողովուրդին մէջ այդ անբացատրելի ու մեծ սէրը բերած էր: Մեսրոպ Մաշտոցի նման Գիրերու Գիւտէն առաջ ունեցած էր տեսիլքը իր երաժշտութեան, որ կու գար դարերու խորէն, հայոց լեռներէն, դաշտերէն եւ վանքերէն:

Դժբախտաբար, մեր Յեղասպանութեան տարիները, եկան ցնցելու անմեղ ու ջինջ կեանքը Կոմիտաս Վարդապետի, որուն ամբողջ էութիւնը կը խախտուէր, եւ որ կու գար վերջակէտ դնելու մեր աննման հանճարին ստեղծագործական կեանքին: Փա՛ռք ու պատիւ անոր յիշատակին, որ վառեց կանթեղը մեր եկեղեցական-ազգային երաժշտութեան, եւ մաղթենք որ Հայր Աստուած տայ մեզի նոր Կոմիտասներ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Աստուածաբանութիւնը՝ Աստուծոյ խորհուրդն է դէպի մարդը խոնարհած, մինչ իմաստասիրութիւնը մարդուն խորհուրդն է առ Աստուած բարձրացած:

Մենք երջանիկ կ'ըլլանք միայն՝ ուրիշները երջանկացնելով:

Մօր սիրտը բնութեան գլուխ գործոցն է:

Բանականութիւնը կը յաղթէ երբ լաւ կը վարուի անոնց հետ՝ որոնք զուրկ են անկէ:

Երջանկութիւնը այն գնդակն է որուն ետեւէն կը վազենք որքան ատեն որ այն կը գլորի, ու երբ կանգ առնէ՝ ոտքով կը հարուածենք:

Հաճոյքը կը հաստատուի ցնորքներու վրայ, մինչ երջանկութիւնը՝ ճշմարտութեան վրայ: